# Պետրոս Դուրյան

## Նոր սեւ օրեր

Մինչ բռնության՝ ընկա՞ն արյան դարերը,
Աշխարհմ՛ը կա արցունք թափող սարերը,
Արյամբ պղտո՞ր դեռ գետերուն ափունքը.
Չը դադրեցավ դեռ այս երկրին սև սուգը.
Ավերակույտն այս ահարկու,
Աշխարհ մոխրոց ու նոճերու:

Հայ դյուցազանց,
Որ հոն ընկան ի վաղուց
Ոսկերոտիքն՝ արմատներն այն վըրիժյուց
Ահ, դեռ բողբոջ մը չարձըկած հող դարձան . . .
Ուրեմն հիմա աղիք չ՛ունի Հայաստան . . .
Այ, դալկահար դու հայրենիք . . .
- Եվ դեռ Քրդին ալ խոնարհինք:

Մառախուղ են հագեր դաշտքն ու լերինքը,
Չը գեղգեղեր Հայ հովվուհվույն սըրինգը,
Հայուն համար չը փալփըլիր աստղիկը,
Արցունքներով թոռմեր հոգվույն ծաղիկը,
Դադրեր անմեղ խինդ, թինդ ու պար,
Շողա ազա՞տ Քրդին տապար:

Դողդոջ մտնե առագաստը գիրգ հարսը,

Արտասվաթոր՝ դեմքին ծածկած հույլ վարսը՝
Որ չ՛ըլլա թե հանկարծ սիրո մրմունջը
Խափանե վատ Քրդին տոփոտ մըռունչը.
Սերը փեսին արյամբ կարմրի,
Հարսը Քրդին կերթա գերի . . . :

Մի՛շտ կը ցանե Հայն, չը հնձեր . . . անոթի՜ . . .
Իր դալկահար դեմքեն երկու շիթ կաթի,
Արտոսր ու քիրտ միանգամայն . . . ո՜վ Աստված,
Նա ճաշակե տրտմած սրտով ցավ ու հաց.
Այս տարաբախտ ազգն է Հա՛յը,
Մեր արյունը, մեր եղբայրը:

Ահ, ոտնակոխ Հայուն սիրտը և տաճար
Հրացանն յուս սա կոշտ Քրդին անդադար,
Եվ մեր ներսը չեռա՞ր կարմիր մեկ ալին
Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ երակին,
Որ սառույցի զերթ որդիներ՝
Մեր աղիքները չենք թոթվեր:

Ի՞նչ սիրտ է այս որ հոս գամեր է Աստված,
Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաված . . .
Չունի ներսը Հայն իր նախնյաց տըրոփը,
Լըքեր է զինք ճակատագրին Սերոբը.
Երես դարձուց Հայն սուսերեն,
«Սև» ժառանգեց լոկ պապերեն:

Սառե աչեր, քարե լեզու, ա՞յս մընաց
Բյուր փառքերեն մեր գոռ ու պերճ հայրենյաց,
Սևագըլուխ խումբ մը ագռավ մընաց լոկ՝
Կամ խումբ մը կույր խըլուրդ՝ ըստրուկ փառքի սոսկ.
Ա՜հ, այն արծիվ ժողովրդեն,
Ո՞ր հարվածվի արդ կոշտ Քրդեն:

Ինչ, սև ձեռքեր հրպին վրճիտ ճակատին
Հայ կուսիկին նրվիրական լաչակի՞ն,
Դրժոխք մը տարփ թոշնեն վարդը կուսության,
Կարծես ծաղիկ մը կոխկոտեն զ՝այս կրզգան,
Ինչպես որ Հայ մը մորթեն,
Կարծեն թե հավ մը մորթեն:

Է՞հ, մի՛ վախեք, ասեղ մանգամ պետք չէ մեզ,
Այլ հայրենի սոսկ զգացում մաղեկեզ,
Ժանգոտ սուր մը, պատռած դրոշ մը թե չունինք,
Կուրծերնուս տակ տրրոփող սի՞րտ մալ չունինք.
Օ՛ն, ոտքերնիս զարնե՝նք գետին,
Հայտնենք մեր ցավը ահագին:

Մեր քերց վարդերն և արևներն մեր եղբարց՝
Մեր տաճարաց խաչերն՝ պատի՛վն հայրենյաց
Մենք պահանջենք, բարօրություն մեր ազգին.
Զա՝յս պահանջենք՝ զա՝յս Սուլթանեն սրտագին,
Մեր պատիվն ու Քուրդը կուզենք,
Եվ կամ նորա զենքին դեմ զե՛նք:

1871